« հոց զայս ուտեն, և ի վերան սակաւ մի
« գինի խմեն ջրով։ Եւ զմիսն չորցընեն
« որպէս զչորմիս, և տանին ամենայն աշ-
« խարհ, աղնուագուն է։ Եւ այլ բազում
« ձկունք կան ի մէջ Թունայ ծովուն (գետոյն),
« զոր համարն՝ միայն արարիչն գիտէ »։

Թունայէն եկնելով Թուի թէ Աբրահամ հնդկային ովկիանոսի ձկներն ուզեր է քննել. գաւ՞ը է թէ ոչ. — քանի մի թուղթ պարապ թողլով, իբրեւ թէ գրած ըլլար, կ'ըսէ. « Այսչափ կենդանի կայ ի Հընդըստանու
« ծովն, զոր Ովկիանոս ասեմք, և յառապն
« (Արաբ) Պահրի—մուհիտ ասէ. այս ծովուն
« եզերն ոչ սք ի մարդկանէ տեսեալ չկայ.
« բայց միայն Աստուած գիտէ »։ Մէկ տեսակ ձուկ մի յիշէ այս մեծ ծովուս մէջ, մեր Աղոցաձուկն կոչածն. « Գազան մի կայ
« որ կոնակն որպէս զաղոց է, և հանապազ
« թշնամի է նաւացն. զի նաւուն տակն մտանէ,
« և որպէս զաղոց կարէ զնաւն և երկու կիսէ.
« և յորժամ նաւորդքն տեսանեն զձուկն
« զայն՝ թրմպուկ հարկանեն և ձայն ածեն.
« ի ձայնէն վախէ, և ի բոլոր նաւուն չի
« զայ. և այնպէս զերծանին ի նմանէ։ (Բա-
« ռոյական). Նաւն օրինակ է աշխարհիս, և
« գազանն այն օրինակ է սատանայի...։
« Նաւն որ թեթեւ լինի՝ չի կարեր վնասել,
« երկու պատճառաւ. մի վասն պահապանացն՝
« որ կոչին Թլփիք (Դլփինք), որ պահեն
« զնաւն. և մի՝ վասն թեթեւութեան, զի
« ոչ կարէ կտրել». զարձեալ բարոյականաւ վերջացընէ։

Անշուշտ անճըրկած մեծ և օտար ծովուց ձկները ճանչնալ և ստորագրել, Աբրահամ իրեն ծանօթ և սիրելի Կ. Պոլսի ծովուն ձկները պիտի ներկայացընէ մեզ. նախ ընդհանուր ձկանց բնութեան կամ մոց համոյ և օգտից վրայ յառաջաբանելով. « Զուկն.
« այն ձուկն որ փոքր է, անոր միսն անուշ
« է և օգուտ, և խիստ գէր չի լինի. և գունն
« գեղին եւս չի լինի. և կեցուածքն ի սուրբ
« ջուր լինի, և քար և աւազին ջուրն. և
« նոյն ձկան միսն անուշ և շուտ հալի և
« համով, այն պատճառին համար որ խիստ
« գէր չի լինի։ Եւ այն որ մեծ է՝ զանձն
« աղէկ կերակրէ, բայց պեղծ խըլտ ընծայէ։
« Եւ այն ձուկն որ հոան զէշ է՝ ի պեղծ և
« ի հոտած ջրէ ընծայել, և գունն սեւ լինի
« և կամ գեղին, պեղծ է. և ինքն զէր
« լինի և մանար, զմարդն տաքցընէ և շահ
« առնէ։ Եւ լաւն այն է որ կամ ընկուզի
« կիթով և կամ հոում ձիթով տապկեն և
« պղպղ և ձէթ խառնեն, և աղ և եղ այնոր,
« սնուցած զէնճէպիլ, և յանպակ գինի քիչ
« մի խմեն, և ջրին համբերեն, այնչափ որ
« կարէ զիմանալ։ Եւ թէ խորուվեսս՝ այլ
« թեթեւ է և շուտ հալի։ Եւ աղի ձուկն
« չէ աղէկ, բոր և քոր առնէ, և աղի
« պալլամ ընծայէ, և գընութիւն աւերէ,
« և արծուիք (ջրդող) առնէ. այն պատճառին
« համար՝ որ շատ ջուր տայ խմել և չտայ
« զոզել. և լաւն այն է որ քացխով եփես
« և հոում ձիթով տապկես. և յետ այնոր
« պանիտ շաքար և կամ մեղր ուտել օգտէ։
« Եւ ձուկն որ ի պաղի և ի ձունին մէջն
« կենայ և թաժայ մնայ և չաւերէ, միս
« նորա անուշ է քան զայլն՝ մէջքն և ազին
« անուշ է, այնոր համար որ ի ժիր շարժման
« է. և քոմն և պորտն դալիզ (կարծր) է.
« և գլուխն գէր է և յուշ հալի։ Եւ լաւն
« ձուկն այն է որ մանդր լինի և կարմիրա-
« խառ և քաղցր ջուր լինի. և ծովուն ձուկն
« ծանր և պեղծ է. և զրած է ի Մոլսիսա-
« կան դիրքն, թէ ամենայն ձուկն ու (որ)
« թեւ ու թեփող չունի՝ պեղծ է, չէ պատեհ
« ուտել »։

Յետ այս յառաջաբանիս Կ. Պոլսի ձկներն յերեւան գան, որոց հետ քանի մ'այլ զեռունք կամ խեցեմորթք, միանգամայն 56 տեսակ. որոց ստորագրութիւնն համառօտ է, 25 երես միայն, այսու վերնագրով « Այժմ
« ասասցուք ի Կոստանդիանու ի ծովէն ելած
« ձկանց և ժժմկանցն, թէ Աստուած կամի։
« ա. Զուկն որ Էօնուզ պալըղի ասեն,
« (Դլփին), մեծ ձուկ է, մինչեւ հինգ կան-
« գուն կու լինի, գէր է քան զամենայն
« ձկանց, երամով շուրջ կու գան մինչեւ 1000
« կամ 10000 ի մի տեղ շուրջ կու գան.
« անգեն են, ոչ ի մարդոյն զեն անեն և
« ոչ ի նաւուց. չեն որսար, զի հրաման
« չկայ. թէ զտանեն որսած ի ձեռն ումեք,
« ճորում (տոյժ) կու առնուն։ Թէ եփես՝